ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 մայիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

71
(2737)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 180

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը շարունակում է ժողովրդավարության նոր հակառեկորդներ սահմանել:

Մշտապես թափանցիկ կառավարման մասին թմբկահարող հեղափոխական իշխանությունն այլեւս այնքան է հեռվացել իր իսկ սկզբունքներից, որ հարկ չի համարում անգամ նախարարների գործուղումների մասին տեղեկություն տրամադրել:

Խոսենք փաստերով. «Ժողովուրդ» օրաթերթը կառավարության կայքից տեղեկանում է, որ վարչապետը որոշումներ է ստորագրել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի եւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան գործուղումների վերաբերյալ:

Այսպիսով, Անդրեասյանը հունիսի 7-9-ը կգործուղվի Ռուսաստանի Դաշնություն (Կազան) Միջազգային կրթական համաժողովին մասնակցելու նպատակով, իսկ Անահիտ Ավանեսյանը մայիսի 21-23-ը կգործուղվի Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնեւ) Առողջապահության համաշխարհային 76-րդ ասամբլեային մասնակցելու նպատակով:

Վարչապետի որոշումներում որեւէ խոսք չկա՝ թե ինչ միջոցներով են նախարարները գործուղումների մեկնելու՝ ՀՀ պետբյուջեի՞, թե՞ հրավիրող կողմն է հոգալու ծախսերը:

Նկատենք, որ մշտապես թե՛ ԱԺ կայքում, թե՛ կառավարության կայքում հրապարակված գործուղումների մասին որոշումներում հստակ նշված է եղել, թե ինչ միջոցների հաշվին են պատգամավորները կամ նախարարները գործուղման մեկնում:

Կարող ենք արձանագրել, որ իրեն ժողովրդավարության բաստիոն հռչակած իշխանությունը հերթական հետքայլն է անում իր իսկ սկզբունքներից:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը դեռեւս 2021 թվականին պետությունից գումար է ստացել՝ որպես տան վարձավճարի փոխհատուցում. սա՝ այն դեպքում, երբ նա, համաձայն իր պաշտոնական կենսագրության, ծնվել եւ ապրել է Երեւանում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը բնակարանի վարձավճարի փոխհատուցման համար դիմում է գրել ԱԺ ղեկավարությանը եւ ստացել փոխհատուցում: Նա դիմումում նշել է, որ բնակվում է Նար-Դոս փողոցում եւ վարձակալել է այդ բնակարանը 110 հազար դրամով: Իհարկե, համաձայն ՀՀ օրենսդրության՝ եթե պատգամավորը մարզաբնակ է, Երեւանում ապրելու համար կարող է դիմել խորհրդարանի ղեկավարությանը եւ ստանալ վարձավճարի փոխհատուցում, սակայն ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, ինչպես նշեցինք, ամսական 110 հազար դրամ է ստացել՝ որպես վարձավճարի փոխհատուցում՝ լինելով երեւանաբնակ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԱԺ լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն՝ պարզելու, թե վերջին 2 տարիներին ովքեր են դիմել պատգամավորներից վարձավճարի փոխհատուցման համար: Լրատվական ծառայությունը, արհեստական խոչընդոտներ ստեղծելով, հրաժարվեց տալ այդ տեղեկությունը: Նախկինում՝ մինչեւ Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալը, երբեք որեւէ գումարման խորհրդարան այս տեղեկությունը գաղտնի չի պահել: Թափանցիկության մասին ճամարտակող հեղափոխական իշխանիկները նաեւ այս պարզ տեղեկությունն են թաքցնում հանրությունից: Մենք, սակայն, ունենք փաստեր, որ Արթուր Հովհաննիսյանը, որը գրանցված է իր ընդդիմադիր քեռու՝ Ռուբեն Հովհաննիսյանի բնակարանի հասցեով, պետական բյուջեից ստացել է վարձավճարի փոխհատուցում, եւ նա ամբիոնից խոսում է կոռուպցիայի անթույլատրելիության մասին. ի՞նչ է այս դեպքը, եթե ոչ կոռուպցիա, պաշտոնեական դիրքի չարաշահում: Բա հո կոռուպցիան պոզուպոչով մեծ կենդանի չէ՞:



Այսպես թվականի մայիսի 12-ին, գլխավոր դատախազի պաշտոնակատարի հրամանով, դատախազի խորհրդական է նշանակվել Եվա Սաղոյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Եվա Սաղոյանը պատահական մարդ չէ. նա 2021թ. հուլիսի 14-ին Սնանկության դատարանի դատավոր նշանակված Լիլիթ Սաղոյանի քույրն է: Եւ այս իրավիճակում հետաքրքիր է, թե երկու քույրերը ինչպես են հակակշռելու դատախազություն-դատարան մոզաիկան՝ բնակվելով նույն հարկի տակ՝ Շենգավիթ վարչական շրջանում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կադրային խնդիրներ կան: Նախարար Վահան Քերոբյանի աշխատակազմը շատ այլ նախարարությունների պես ամբողջական չէ, ընդ որում՝ երկար ժամանակ է, ինչ այս վիճակում է: «Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքը: Ըստ կայքում առկա տվյալների՝ նախարար Վահան Քերոբյանը չունի մամուլի քարտուղար: Վարչություններում եւս կան թափուր հաստիքներ, օրինակ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը չունի Գիտելիքահեն տնտեսության վարչության պետ, Թեթեւ արդյունաբերության վարչության պետ, ինչպես նաեւ Անասնաբուծության վարչության, Սննդամթերքի անվտանգության վարչության պետեր: Եթե խոսենք բաժիններից, ապա թափուր են առաջին բաժնի պետի, ինչպես նաեւ ստորաբաժանումների պետերի պաշտոնները: Ղեկավար չունի Առեւտրային ներկայացուցիչների եւ ներդրողների աջակցության գրասենյակը, Մարքեթինգի եւ խթանման վարչությունը: Այս ամենը վկայում է այն մասին, որ նախարարությունում աշխատել չեն ցանկանում, եւ անձամբ նախարար Քերոբյանի գործոնը եւս կարեւոր է: Հենց նրա օրոք են նախարարությունում այնպիսի փոփոխություններ եղել, որոնցից հետո վարչություններ, բաժիններ են միավորվել: Նրա տեղակալները եւս հաճախ են փոխվում:

ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵՆՔ

ՄԻՇԵԼԸ ԹՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱ

Քրյուսելում չորս ժամ տեւած հայ-ադրբեջանական բանակցություններից հետո դրանք հյուրընկալող Եվրոդողական խորհրդի նախագահը հայտարարեց, որ Հայաստանը եւ Ադրբեջանը վերահաստատել են միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչելու հանձնառությունը: Ընդ որում՝ այս անգամ Շառլ Միշելը ընդգծեց երկու երկրների տարածքը՝ Հայաստանի 29 հազար 800 եւ Ադրբեջանի 86 հազար 600 քառակուսի կմ-ը: Այս 86 հազար 600 քառակուսի կմ-ի մեջ մտնում է նաեւ Լեռնային Ղարաբաղը:

-Պարոն Ասլանյան, ի՞նչ կասեք Միշելի հայտարարության մասին, կարո՞ղ ենք ենթադրել, որ Հայաստանը պատրաստվում է ճանաչել Արցախն Ադրբեջանի կազմում:

-Սա նշանակում է, որ բանակցություններում մենք մեկ քայլ առաջ ենք արդեն գնացել: Բոլոր այն մարդիկ, որոնք մտածում են, որ պետք է միջազգային հանրությունից էլ պահանջել՝ ճանաչի Արցախի սուվերենությունը, սխալվում են: Հարցը դրված է այսպես՝ միջազգային հանրությունը եւ միջազգային իրավունքը պահանջում է, որ 2 պետությունները նախեւառաջ ճանաչեն միմյանց տարածքային ամբողջականությունը: Իսկ հիմա երբ մենք ճանաչում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, դա դեռ չի նշանակում, որ մենք հրաժարվում ենք Արցախի հարցից: Դա նշանակում է հետեւյալը՝ Ադրբեջանը դուրս է գալիս Հայաստանի այն բոլոր տարածքներից, որտեղ ներխուժել է եւ դրանով իսկ ապահովվում է Հայաստանի Հանրապետության 29 800ք/կմ-ը, որից հետո, բնական է, հարց է առաջանալու՝ Ադրբեջանի կազմում գտնվող փոքրամասնություն կազմող Արցախի ժողովուրդն արդեն հելսինկյան սկզբունքով իրավունք ունի ինքնորոշվելու եւ իր պատմական հողում ապրելու: Միջազգային հանրությանը դու չես կարող ասել՝ սկզբում սա տուր, նա տուր, հետո նոր մենք կճանաչենք այլ երկրի տարածքային ամբողջականությունը: 30 տարի կեղծ խաղեր են տվել, բայց հիմա խաղեր չկա, կա հստակ փաստ. մենք ճանաչում ենք երկկողմանի տարածքային ամբողջականությունը եւ երբեք օրակարգից չենք հանում, որ Արցախի ժողովուրդն իրավունք ունի, իր պատմական հողում ինքնորոշվելուց բացի, նաեւ ստեղծի իր կյանքը եւ գոյությունը ապահովող պայմաններ: Այստեղ արդեն միջազգային հանրությունն է դառնում այդ հարցի լուծողը:

-Պարոն Ասլանյան, ասում եք՝ եթե ճանաչենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա դուրս կգան ՀՀ այն տարածքներից, որտեղ ապօրինի ներխուժել են: Մինչ այս ձեռք բերված որեւէ պայմանավորվածություն Ադրբեջանը չի պահել. ի՞նչ երաշխիք կա, որ եթե ճանաչենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա իր զորքերը կհանի ՀՀ տարածքից:

-Թող Ադրբեջանը դուրս չգա, չգիտեմ, բայց Ադրբեջանը հիմա հայտարարում է՝ քանի որ իմ տարածքային ամբողջականությունը չեն ճանաչում, ես դուրս չեմ գալիս, այնպես որ, ճանաչելուց հետո, երբ որ դուրս չի գա, այն ժամանակ արդեն միջազգային հանրությանը թող պատասխան տա, քանի որ դա արդեն միջազգային հանրությունն է պատասխանատու. Միշելը թող պատասխան տա, թե ինչի Ադրբեջանը դուրս չի գալիս ՀՀ տարածքից. դա իմ կարծիքն է:

-Այսինքն՝ Հայաստանը գնում է հետեւյալ ճանապարհով՝ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ Արցախը ներառյալ:

-Առաջին՝ նախ՝ համապատասխան ձեւով ճանաչում է տարածքային ամբողջականությունը, որից հետո արդեն գալիս են հաջորդ հարցերը: Մինչեւ չասենք՝ մեկ, չենք կարող ասել՝ երկու: Կարծում եմ՝ մենք պետք է գնանք Կոսովոյի նախադեպով. մենք պետք է պայքարենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Մայիսի 28-ից հունիսի 3-ը Հայաստան կժամանի Արգենտինյան Հանրապետության Սենատի Արգենտինա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Գիժերմո Անդրադայո գլխավորած պատվիրակությունը:

Հայաստան ժամանող պատվիրակությանը կդիմավորի «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Արգենտինա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Իշխան Սաղաթելյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի՝ Ազգային ժողովի նախագահի՝ 2018 թվականի հունվարի 25-ի «Ներկայացուցչական ծախսերի իրականացման եւ հուշանվերների տրամադրման կարգի մասին» կարգադրության համաձայն, Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ՀԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ



«Գելլափ ինթերնեշնլ» կազմակերպությունը ներկայացրել է իր հերթական զեկույցը, որն այս անգամ ունի «Թուքումուր» անվանումը: Հետազոտությունն արվել է ապրիլի 26-30-ը հեռախոսային հետազոտությունների միջոցով: Օրինակ՝ հարցերից մեկով քաղաքացիներից հետաքրքրվել են, թե ինչպես են գնահատում, օրինակ, ՀՀ վարչապետի, կառավարության, Ազգային ժողովի եւ նախագահի գործունեությունը: Ըստ այդմ՝ հարցվածների 13 տոկոսը կողմ է վարչապետի, 10,8 տոկոսը՝ կառավարության, 5,9 տոկոսը՝ Ազգային ժողովի, եւ 8,5 տոկոսը՝ ՀՀ նախագահի գործունեությանը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ



Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության ռազմական կցորդի հաստիք կստեղծվի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նստավայրը լինելու է Նյու Դելի քաղաքը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ երկու երկրների միջեւ ռազմական եւ ռազմատեխնիկական ոլորտում առկա է համագործակցության մեծ ներուժ: Հնդկական կողմի ռազմաարդյունաբերական համալիրի պետական կառույցների, մասնավոր կազմակերպությունների եւ ընկերությունների կողմից փոխգործակցություն իրականացնելու ուղղությամբ վերջին ժամանակաշրջանում ցուցաբերած մեծ հետաքրքրությունն անհրաժեշտություն է առաջացել Հնդկաստանի Հանրապետությունում ստեղծել Հայաստանի Հանրապետության ռազմական կցորդի հաստիք:

Հնդկաստանում ռազմական կցորդը պետք է իրականացնի ներկայացուցչական աշխատանք, որը ներառում է երկու երկրների ռազմական գերատեսչությունների հետ պաշտոնական կապերի հաստատում եւ խորացում, ռազմական ոլորտում հարաբերությունների զարգացում, համագործակցության ծրագրերի իրականացման մշտադիտարկում, օժանդակության ցուցաբերում նախարարության եւ զինված ուժերի պատվիրակությունների այցերի կազմակերպման ժամանակ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԿՕՏԱՐՎԻ

Պետական սեփականություն հանդիսացող, ՀՀ Շիրակի մարզ, համայնք Գյումրի, Ա. Մյասնիկյան փողոց 43/4 հասցեում գտնվող 493.2 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար հատկացված 0.060877 հեկտար մակերեսով հողամասը կօտարվի դասական աճուրդով: 2023 թվականի մարտի 7-ի դրությամբ գույքի գնահատված շուկայական արժեքը կազմում է 72 մլն 600 հազար ՀՀ դրամ: Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված՝ հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքը կազմում է 22 մլն 500 հազար ՀՀ դրամ: Աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գին է սահմանվել գույքի գնահատված արժեքի 100 տոկոսի չափը՝ 72 մլն ՀՀ դրամ:

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՎԱՐՈՐԴԻՆ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ մեկ տոննա կոկաին Հայաստան ներմուծելու գործով ձերբակալվել է թմրամիջոցը Հայաստան ներմուծած վարորդը, ինչպես նաեւ գործով բերման են ենթարկվել այլ անձինք:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահ համակարգում կասկածներ կան, որ Հայաստան ներմուծելու գործընթացը հովանավորվել է խոշոր «տանիքների» կամ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, ուստի կալանավորումների շարք է սպասվում այդ գործի շրջանակներում: Իսկ թե ովքեր են ներգրավված գործում, կներկայացնենք մանրամասներ առաջիկայում:

Հիշեցնենք՝ երեկ ԱԱԾ-ն հայտնեց, որ 2023 թվականի մայիսի 13-ին նախաձեռնված եւ իրականացվող թիվ 58221423 քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված վարութային գործողություններով պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող եւ մրգերի ներմուծմամբ զբաղվող ընկերության կողմից Էկվադորում գտնվող ընկերությունից պատվիրված ապրանքատեսակի հետ տարանցիկ երկրների՝ Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի տարածքով Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել Կոկաին տեսակի շուրջ մեկ տոննա քաշով թմրամիջոց /շուրջ 250 միլիոն եվրո արժողության/, որը հայտնաբերվել եւ գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում:

Քրեական վարույթով նշանակվել է դատանյութագիտական փորձաքննություն, կատարվել են հարցաքննություններ, տեղեկատվության պահանջ է ուղարկվել իրավասու մարմիններ, հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ հանձնարարություն: Նախաքննությունը շարունակվում է:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԿՈՌՆԻՁՈՐՈՒՄ ՀԱՎԱՔ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Դեռեւս մայիսի 15-ին ՀՅԴ-ն հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ մայիսի 20-ին Սյունիքի մարզի Կոռնիձոր համայնքում հրավիրում են մասնակցելու երթ-հանրահավաքին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ժողով է հրավիրել իր մոտ ու հորդորել այնպես կազմակերպել ամեն ինչ, որ այդ հավաքում քիչ թվով մարդիկ լինեն, խժդժություններ չլինեն, ու հանկարծ Սյունիքում կրկին մթնոլորտը չլարվի: Մեր աղբյուրները փոխանցում են, որ մարզպետի մոտ հավաքին ներկա են գտնվել սյունեցի համայնքապետերը ու ՔՊ-ամերձ անդամները:

Հիշեցնենք, որ ՀՅԴ-ն իր հայտարարությունում նշել էր. «Մայիսի 20-ին՝ ժամը 12:00-ին, բոլորս դեպի Կոռնիձոր, դեպի Կոռնիձոր՝ ի ցույց դնելու մեր համախմբումն ու ընդվզումը, դեպի Կոռնիձոր՝ ասելու համար, որ մենք ենք Արցախի տերը, ժողովուրդն է Արցախի տերը, եւ ոչ ոք չի կարող այն զիջել, առեւտրի նյութ դարձնել, վաճառել կամ ուժով տիրանալ: Կամավորության սկզբունքով բոլորս դեպի Կոռնիձոր»:

ArmLur.am-ը կապ է հաստատել Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ՝ պարզելու համար, թե որքանով են իրական այդ տեղեկությունները: Նախ մարզպետը ծիծաղեց, երբ լսեց մեր հարցը, այնուհետեւ հայտարարեց. «Ես ինչո՞ւ պետք է նման ժողով անեմ, այն էլ՝ նման բովանդակությամբ, եթե մարդիկ որոշել են հավաքվել՝ ի պաշտպանություն Արցախի: Ես ինչո՞ւ պետք է ինչ-որ բաներ արգելեմ: Անկեղծ ասած, շատ զարմացա, որովհետեւ բացարձակ այդ տեղեկությունները իրական չեն, ես որեւէ խնդիր չեմ տեսնում. եթե մարդիկ որոշել են համախմբվել՝ հանուն Արցախի, ապա ես միայն ուրախ կլինեմ»:

Ռոբերտ Ղուկասյանը հավելեց, որ ինքն իր աշխատանքն է իրականացնում, ու իր գլխավոր նպատակն այն է, որ Սյունիքում պահպանվի այն խաղաղությունը, որն այս պահին կա: «Հիմա քաղաքական հարցերի ժամանակը չէ: Հավատացե՛ք՝ հիմա պետք է բոլորս միահամուռ պայքարենք մեր խաղաղության ու անվտանգության համար»,- եզրափակեց մարզպետը:

ԼՈՒՐԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երեւանը հաջորդ տարվանից պատրաստվում է անցնել ճանապարհների ընթացիկ սպասարկման:

Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից: Սա ենթադրում է, որ յուրաքանչյուր վարչական շրջան պայմանականորեն 3 կամ 5 տարով ունենալու է ճանապարհները սպասարկող «Ճանշին» ընկերություն:

Երեւանում նախաձեռնվող կարեւոր այս նախագծով հաղթող ճանաչված ճանապարհաշինական ընկերությունները տարին 12 ամիս զբաղվելու են փոսային նորոգումներով, ճանապարհների ճաքալցումներով եւ գծանշումներով, ճանապարհային նշանների եւ անվահիրիչների տեղադրմամբ, պահպանմամբ ու սպասարկմամբ:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՍՏԱՑԵՑ ԽՈՍՔԵՐԸ

Փաշինյանը կարեւոր քայլ է համարում Բրյուսելում Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից միմյանց տարածքային ամբողջականության ճանաչումը:

Արձանագրվել է, որ Ադրբեջանը ճանաչում է Հայաստանի 29,8 հազ. ք/կմ-ը, Հայաստանը ճանաչում է Ադրբեջանի 86,6 հազ. ք/կմ-ը:

Սա թույլ կտա կայունություն հաստատել տարածաշրջանում եւ հասնել խաղաղության պայմանագրի տեքստի վերջնականացմանը: «Հաջորդ քայլը պետք է լինի սահմանազատման հանձնաժողովի ձեւավորման հիմքի բացահայտումը»,- կառավարության նիստին ասաց ՀՀ վարչապետը:

Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի հայտարարության մեջ ընդգծվել է Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ երկխոսության կարեւորությունը Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության ապահովման համար:

ՈՍՏԻԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԲԱՐՁՐԱՆԱ

Մայիսի 16-ին ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն այցելել է Ոստիկանության զորքեր: Ոստիկանության զորքերի հրամանատար Հայկ Բաբայանի ուղեկցությամբ նա շրջել է տարածքում, եղել Հավերժության պուրակում, որտեղ սահմանների պաշտպանության եւ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանության զորքերի ծառայողների անվանական ծառերն են. հայտնում է ՆԳՆ-ն: Նույն օրը Ոստիկանության զորքերում տեղի է ունեցել նաեւ աշխատանքային խորհրդակցություն:

Ներքին գործերի նախարարը, ողջունելով ներկաներին, խոսել է ՆԳՆ ոստիկանությունում ընթացող բարեփոխումների մասին: Անդրադառնալով հատկապես Ոստիկանական գվարդիայի կազմավորմանը՝ նա խոսել է ընթացքի, նպատակի եւ կարեւորության մասին:

Վահե Ղազարյանը, ընդգծելով Ոստիկանության զորքերի ծառայողների սոցիալական երաշխիքների բարձրացման հարցը, ներկայացրել է ձեռնարկվող քայլերի մասին: Այդ ուղղությամբ նա հատկապես շեշտել է ատեստավորման գործընթացի կարեւորությունը, ինչի շնորհիվ էապես կբարձրանան ծառայողների աշխատավարձերը:

Քննարկվել են նաեւ Ոստիկանության զորքերի ծառայողների բարոյահոգեբանական վիճակին, սպառազինությանն ու տեխնիկային վերաբերող հարցեր: Ավարտին ներքին գործերի նախարարը Ոստիկանության զորքերի հրամանատարությանը տվել է կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ:

ՈՐՈՇՈՒՄ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ

Ավարտվել է Նոր Նորք վարչական շրջանի նախկին ղեկավարի եւ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի կողմից առերեւույթ չարաշահումներ կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթից անջատված մասով նախաքննությունը:

Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարից դատախազությունում ստացված հաղորդման եւ փաստաթղթերի առնչությամբ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնված մի քանի քրեական վարույթի միացմամբ իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ վարչական շրջանի նախկին ղեկավար Ա.Ու.-ն, պաշտոնեական դիրքն օգտագործելով, նախնական համաձայնության գալով տարատեսակ միջոցառումներ կազմակերպելու իրավասությամբ օժտված ՍՊ ընկերության տնօրենի եւ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի հետ, որոշել են 2016թ. ապրիլի 7-ին «Մայրության եւ գեղեցկության» տոնին նվիրված միջոցառում կազմակերպելու պատրվակով յուրացնել այդ միջոցառման կազմակերպման եւ անցկացման համար նախատեսված գումարը:

Այդ նպատակով ՍՊ ընկերության տնօրենի եւ վարչական շրջանի ղեկավար միջեւ կազմվել է հանձնման-ընդունման վերաբերյալ կեղծ արձանագրություն, իսկ ֆինանսական բաժնի պետի հետ՝ կեղծ ակտ, ըստ որի՝ 2016թ. ապրիլի 7-ին Երեւան քաղաքի Թեւոսյան փողոցում գործող ռեստորանում, իբրեւ թե, կազմակերպվել եւ անցկացվել է վերոնշյալ միջոցառումը, ինչն իրականում տեղի չի ունեցել: Այդ նպատակով ընկերության հաշվեհամարին փոխանցվել է միջոցառման կազմակերպման եւ անցկացման համար նախատեսված 1.500.000 ՀՀ դրամ գումարը, որը կանխիկացվել է ընկերության տնօրենի կողմից:

Այնուհետեւ վերջինս, կատարելով հարկային պարտավորությունները, մնացած 1.250.000 ՀՀ դրամը ֆինանսական բաժնի պետի աշխատասենյակում առձեռն տվել է նրան: Արդյունքում վարչական շրջանի ղեկավարը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, բաժնի պետի հետ նախնական համաձայնությամբ յուրացրել է խոշոր չափի՝ 1.250.000 ՀՀ դրամ գումարը՝ Երեւան համայնքին պատճառելով գույքային վնաս:

Բացի այդ, վարչական շրջանի նախկին ղեկավարը, դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, Երեւան քաղաքի Գայի պողոտայի 19 հասցեում գտնվող Նոր Նորք վարչական շրջանի աշխատակազմի շինության մեջ տեղակայված, արդեն իսկ վարձակալությամբ տրամադրված տարածքներում ծավալած հետագա գործունեությունը շարունակելու նպատակով, վարչական շրջանի ֆինանսական բաժնի պետի հետ նախնական համաձայնությամբ, պայմանագրով նախատեսված՝ տարածքների յուրաքանչյուր ամսվա համար նախատեսված վարձավճարից բացի, այդ տարածքներում գործունեություն ծավալած ՍՊ երկու ընկերություններից ապօրինի պահանջել են «Նոր Նորք» զարգացման հիմնադրամից, 2016թ. սկսած, յուրաքանչյուր ամսվա համար վճարել 20.000 ՀՀ դրամ գումար, իսկ ԱՁ-ից՝ 15.000 ՀՀ դրամ գումար՝ չվճարելու դեպքում սպառնալով դադարեցնել վարձակալության պայմանագրերը:

Քննության տվյալներով՝ 2016թ. մինչ 2018թ. ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում ՍՊ ընկերությունները հիմնադրամին են փոխանցել 530 000-ական դրամ, իսկ ԱՁ-ն՝ 420.000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում կազմակերպությունների օրինական շահերին պատճառվել է ընդհանուր 1.480.000 ՀՀ դրամի չափով էական գույքային վնաս:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ նշված վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, աշխատակազմի համար ձեռք բերված գրենական պիտույքների բաշխման ցուցակներում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու եղանակով ուռճացրել է աշխատակազմի տարբեր բաժիններին տրամադրված «A4» ձեւաչափի թղթերի քանակը: Մասնավորապես՝ պահանջագրերում ներառված խմբաքանակի փոխարեն տրամադրել է զգալի քիչ քանակությամբ թուղթ, իսկ բաժիններին չտրամադրված ընդհանուր խոշոր չափ կազմող՝ 1.443.250 ՀՀ դրամ արժեքի 1255 տուփ «A4» ձեւաչափի թուղթը յուրացրել է՝ պատճառելով էական գույքային վնաս:

Նախաքննության ընթացքում վերջիններիս մասով վարույթն անջատվել է առանձին վարույթում եւ հայտարարվել նախաքննության ավարտի մասին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ վարչական շրջանի նախկին ղեկավարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքն օգտագործելով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերով յուրացում կատարելը), 314-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք կատարելը) եւ 309-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը):

Աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով (2 դրվագ), 314-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) եւ 309-րդ հոդվածի 1-ին մասով:

Որպես խափանման միջոց՝ նրանց նկատմամբ կիրառվել է չբացակայելու արգելքը:

Նախաքննության ընթացքում վարչական շրջանի նախկին ղեկավարը, իրեն մեղսագրված վերոնշյալ հանցավոր արարքներով, համայնքին պատճառված վնասը վերականգնել է:

Նշված դրվագներով անջատված մասով քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ վարույթը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Վարչական շրջանի նախկին ղեկավարի առերեւույթ մասնակցությամբ հանցավոր այլ դրսեւորումների մասով նախաքննությունը դեռեւս շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

2023 թվականի մայիսի 17-ին՝ ժամը 16:15-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողները, ռասայական, ազգային, էթնիկ ծագումով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, իրենց ծառայողական պարտքը կատարող ՀՀ ԶՈՒ զինծառայողներին կյանքից ապօրինաբար զրկելու դիտավորությամբ հրաձգային զենքերից կրակոցներ են արձակել ՀՀ սահմանագծի արեւելյան ուղղությամբ տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքի ուղղությամբ: Դրա հետեւանքով վիրավորում է ստացել նույն զորամասի ժամկետային զինծառայողը, որը ստացված վնասվածքից հետագայում մահացել է:

Ադրբեջանական զինված ուժերը նաեւ թիրախային կրակահերթեր են արձակել վիրավոր զինծառայողին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով նույն մարտական դիրք մեկնած «ՈՒԱՁ» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով դաստակի շրջանում վնասվածք է ստացել նույն զորամասի բուժակը: Նրա վիճակը գնահատվում է բավարար:

Դեպքի վերաբերյալ ստացված հաղորդման հիման վրա՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ եւ 15-րդ կետերով եւ 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերով:

Կատարվում են անհետաձգելի եւ անհրաժեշտ ապացուցողական եւ վարութային գործողություններ կատարվածի հանգամանքները պարզելու, Ադրբեջանի ԶՈՒ զինծառայողների հանցավոր գործողություններին լիարժեք իրավական գնահատականներ տալու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԻԱՀԱՐՎԱԾՆԵՐԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

Ռուսական ուժերը գիշերը գնդակոծել են Կիեւը, Օդեսան եւ Ուկրաինայի մի շարք այլ քաղաքներ: Հարվածների հետեւանքով Օդեսայում 1 մարդ է զոհվել, 2-ը՝ վիրավորվել: Նրանք այն արդյունաբերական հաստատության աշխատակիցներն են, որտեղ ընկել է հրթիռը. այս մասին տեղեկանում ենք France 24 պարբերականից:

Հաղորդվում է, որ օդային տագնապի ազդանշաններ են հնչել Ուկրաինայի ամբողջ տարածքում առավոտյան ժամը 4:44-ից:

Կիեւում բեկորների ընկնելու պատճառով հրդեհներ են բռնկվել ոչ բնակելի շենքերում: Տուժածներ չկան: Ըստ քաղաքի վարչակազմի՝ բոլոր հրթիռները խոցվել են ՀՕՊ համակարգերի կողմից:

Իր հերթին BBC-ն հաղորդում է, որ Կիեւն այս ամիս արդեն իններորդ անգամ է ավիահարվածների ենթարկվում:

Ռուսական կողմից էլ հայտնել են, որ Ուկրաինայի զինված ուժերը պայթուցիկ սարք են նետել Կուրսկի մարզի Գլուշկովո բնակավայրում գտնվող առողջարանային համալիրի վրա: Ըստ մարզի ղեկավար Ռոման Ստարովոյտովի՝ 2 մարդ տուժել է: Դոնեցկի գնդակոծության հետեւանքով էլ տուժել է 1 կին:

ՏԱՍՍ գործակալությունն էլ հաղորդում է, որ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Օկտյաբրսկի Ռուդնիկ բնակավայրի գնդակոծության հետեւանքով վնասվել է հիվանդանոցը եւ մի քանի շենք:

Իսկ մայիսի 17-ին, ըստ Ուկրաինայի իշխանությունների, Խերսոնի մարզի գյուղերից մեկի մոտ տեղի ունեցած գնդակոծության հետեւանքով առնվազն 8 մարդ է զոհվել, այդ թվում՝ 1 երեխա: Եվս 17 մարդ վիրավորվել է: Կողմերը միմյանց մեղադրել են քաղաքացիական հատվածներին հարվածներ հասցնելու համար:

Դոնեցկի Ժողովրդական Հանրապետությունում, ըստ Becmu պարբերականի, մայիսի 17-ին ուկրաինական կողմի գնդակոծության հետեւանքով 5 մարդ է զոհվել, ավելի քան 20 մարդ՝ վիրավորվել:

ՀՐԴԵՀ՝ «1 ԲԻՍ» ԱՍՏԻՃԱՆԻ

Մայիսի 18-ին՝ ժամը 13:55-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Վաղարշյան փողոցի թիվ 24/1 շենքի 14-րդ հարկի բնակարաններից մեկում հրդեհ է բռնկվել:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ, մեկ ավտոսանդուղք, Հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի հերթապահ եւ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խմբերը:

Հայտարարվել է հրդեհի բարդության «1 ԲԻՍ» աստիճան. դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից եւս երկու մարտական հաշվարկ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 17-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 58 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՔՑՐԵԼ Է ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում տեխնիկական որոշ փոփոխությունների հետեւանքով անհետացել է Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021 թվականի ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանի կենսագրությունը: Նախկինում մարզպետարանի կայքում հրապարակված Հայկ Ղալումյանի կենսագրականում տվյալներ կային, որոնք կարող էին հարցեր առաջացնել: Օրինակ՝ այդ կենսագրության մեջ նշված չէր, որ Հայկ Ղալումյանը « Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է: Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝հարցնելով, թե նա ՔՊ-ի Տավուշի մարզային, թե Իջեւանի տարածքային կազմակերպության ղեկավարն է: Մարզպետարանից պատասխանել են, որ մարզպետ Հայկ Ղալումյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահն է:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆ ԱՆՏԵՂՅԱԿ Է

2021թ. օգոստոսի սկզբից Տավուշի մարզի սահմանագոտում տեղակայվել են ռուսական զինուժի ստորաբաժանումներ: Հայաստանի անկախանալուց հետո Տավուշի մարզի տարածքում՝ մարզի սահմանագոտում, Ռուսաստանի զինված ուժերի ստորաբաժանումներ երբեք չեն տեղակայվել, հայ-ադրբեջանական սահմանի պաշտպանությունն իրականացրել են ՀՀ պաշտպանության նախարարության զորմասերի զինծառայողները: Ռուսական զինուժի համար զորանոցներ կառուցվեցին Նոյեմբերյան խոշոր համայնքի Ոսկեպար գյուղում եւ Բերդ խոշոր համայնքի Այգեպար գյուղում՝ Այգեպարի փոքր, վաղուց չգործող փոքր օդանավակայանի տարածքում: Ոսկեպարում ռուսական զինուժի համար զորանոց կառուցելու համար Նոյեմբերյան համայնքի ավագանին, ընդառաջելով կառավարության առաջարկին, վարձակալությամբ 2 հեկտար հող հատկացրեց: Նախատեսվում էր Տավուշի մարզի տարածքում ռուսական զինուժի համար 3-րդ զորանոցը կառուցել Իջեւան խոշոր համայնքի սահմանամերձ Աչաջուր գյուղի տարածքում, սակայն այդ գյուղի մուտքի մոտ զորանոցի կառուցման աշխատանքները հետո դադարեցվեցին: Ոսկեպարում եւ Այգեպարում զորանոցները կառուցվեցին կոմպակտ, հավաքովի կոնստրուկցիաներով: Ոսկեպարում սարքված զորանոցի առջեւ՝ Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին, հառնում է տուֆից կերտված հայ-ռուսական խաչերով խաչքարը: Տավուշի մարզի բնակիչները չգիտեն, թե ինչ նպատակով են կառուցվել ադ զորանոցները, այդտեղ տեղակայված ռուսական զինուժն ինչ գործառույթներ է իրականացնելու: Ենթադրվում է, որ դրանցում տեղակայված զինուժն իրականացնելու է Տավուշի սահմանագոտում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծումն ու սահմանազատումը: Այդ զորանոցներում տեղակայված զինուժի գործառույթների մասին տեղեկատավական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «ՌԴ զորանոցների վերաբերյալ Ձեր հարցը ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գործառնույթներից դուրս է, առաջարկում ենք այն ուղղել համապատասխան գերատեսչությանը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՍԱՐՍԱՆԳԻ ՋՐԱՄԲԱՐ

ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ԿՏՐՈՒԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության՝ 158 օր տարունակվող շրջափակման պայմաններում հունվարի 9-ից ի վեր արդեն 129 օր է՝ Ադրբեջանը խափանում է իր վերահսկողության տակ գտնվող տարածքով անցնող միակ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծով Հայաստանից Արցախ էլեկտրամատակարարումը: Այդ միջոցով Ադրբեջանն իրականացնում է էներգետիկ, տնտեսական, հումանիտար եւ բնապահպանական ահաբեկչություն՝ տառապանքներ պատճառելով Արցախի ժողովրդին, ինչպես նաեւ հանգեցնելով տեղի միկրոկլիմայի կտրուկ փոփոխության, ստորերկրյա ջրային պաշարների նվազման, բազմաթիվ բուսատեսակների ու կենդանատեսակների կորստի ռիսկի: Արցախի բնակիչների էներգետիկ նվազագույն կարիքների բավարարման համար նման պայմաններում Արցախի Հանրապետությունը ստիպված է կիրառել միայն էլեկտրաէներգիայի արտադրության ներքին ենթակառուցվածքը, որի հզորության շուրջ 70 տոկոսը բաժին է ընկնում Սարսանգի ջրամբարի հիդրոէլեկտրակայանին:

Այդ պատճառով այսօր լուրջ բնապահպանական խնդիրների առաջ է կանգնած Արցախի Հանրապետության միակ խոշոր ջրամբարը՝ իր ու շրջակա միջավայրի կենսաբազմազանությամբ: Մասնավորապես, մեծ չափով կրճատվել են ջրամբարի հայելու մակերեսը եւ դրանից գոլորշացումն ու ինֆիլտրացիան, ինչը տեղի միկրոկլիմայի փոփոխության հիմնական պատճառն է՝ իր բոլոր բացասական հետեւանքներով շրջակա միջավայրի ու գյուղատնտեսության համար:

Քանի որ ջրամբարի ելքի բաղադրիչներից է նաեւ ստորերկրյա ջրերի սնուցումը եւ դրանց ելքերը բնական աղբյուրների տեսքով, ապա Թարթառ գետի հովտում, ջրամբարի հայելու նիշից ցածր գտնվող բնակավայրերը եւ գյուղատնտեսական նշանակության հողահանդակները արագորեն զրկվում են ջրային պաշարներից: Այդ նիշից ցած գործող բոլոր ջրաղբյուրների ելքերը նվազել են, որոշներն էլ ցամաքել են, իսկ ստորերկրյա ջրերի մակարդակը՝ իջել:

Սարսանգի ջրամբարում ջրի մակարդակի գերնվազեցումը հանգեցրել է նաեւ ջրային ֆաունայի եւ ֆլորայի կորստի առավելագույն ռիսկերի: Վտանգվել են նաեւ ջրամբարի ափերին բնակվող՝ Արցախի Հանրապետության բույսերի եւ կենդանիների Կարմիր գրքի ցանկերում ընդգրկված մի շարք տեսակներ:

Ջրամբարի մակարդակի նման իջեցումը հանգեցրել է ափամերձ տարածքի ուտելի եւ համեմունքային (մոտ 125 տեսակ) դեղաբույսերի (մոտ 35 տեսակ), մեղրատու (մոտ 156 տեսակ) բույսերի կորստի լրջագույն ռիսկերի, իսկ նշված բուսատեսակները այդ տարածքի շրջակա միջավայրի ու բնակչության կենսապահովման անբաժանելի մասն են:

Արցախի ջրերում տարածված 17 տեսակ ձկներից 12-ը կամ 70,8%-ը գտնվում է Սարսանգի ջրամբարում, որից օգտվում են ափամերձ տարածքների բնակիչները: Ջրի ծավալի այդպիսի կրճատումը կտրուկ բարձրացրել է ձկների խտությունը եւ, որպես հետեւանք, ինչպես նվազեցրել կեր հայթայթելու հնարավորությունները, այնպես էլ մեծացրել ինքնաթունավորման ռիսկերը, ինչը կարճ ժամկետում հանգեցնելու է ձկների մեծամասշտաբ անկման:

Այստեղ է գտնվում նաեւ Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակի չափորոշիչներով «Կրիտիկական վիճակում» գտնվող փոքրասիական տրիտոնը, ափամերձ տարածքում բնակվող սիրիական սխտորագորտը, սողուններից միջերկրածովային կրիան, անդրկովկասյան սահնօձը: Սարսանգի ջրամբարի հիմնական բնակիչներից են ԲՊՄՄ Կարմիր ցուցակներում գրանցված կաթնասուններից ջրասամույրը, իսկ թռչուններից՝ փոքր ձկնկուլը եւ մեծ ձկնկուլը, որոնք ձվադրում են ափամերձ խիտ բուսուտներում, իսկ ջրամբարի չորացումը հանգեցրել է այս տեսակների բնադրագաղութների իսպառ վերացման: Սարսանգի ջրամբարի տարածքը հանդիսանում է մի շարք քոչող ու չվող թռչունների միգրացիայի խաչմերուկ, եւ ջրի ծավալի նման կտրուկ ու աննախադեպ անկումը հանգեցրել է նաեւ այդ թռչնատեսակների որոշակի կորստի եւ միգրացիոն ուղիների փոփոխության:

Ընդհանուր տեղեկություններ

Սարսանգի ջրամբարի մակարդակի փոփոխությունը պայմանավորված է ջրային հաշվեկշռի բաղադրիչների մեծություններով, որն էլ իր հերթին կախված է տարվա հիդրոլոգիական եւ եղանակակլիմայական պայմաններից, ինչպես նաեւ ջրամբարից բաց թողնվող ջրի ծավալներից:

Բացի հունվարի 9-ից Հայաստան-Արցախ էլեկտրամատակարարման շարունակական խափանումից, ինչպես մինչ այդ, այդպես էլ Արցախի շրջափակման ընթացքում Ադրբեջանը՝ պարբերաբար, իսկ մարտի 22-ից արդեն վերջնականապես խափանել է նաեւ Հայաստան-Արցախ միակ խողովակաշարով գազի մատակարարումը: Դա եւս հանգեցրել է հումանիտար եւ տնտեսական լրջագույն խնդիրների, ինչպես նաեւ էլեկտրաէներգիայի ներքին սպառման ու արտադրության անխուսափելի աճի եւ էլեկտրամատակարարման համակարգերի գերծանրաբեռնվածության:

Հանրապետության էլեկտրաէներգիայի մատակարարման նպատակով վերջին ամիսներին Սարսանգի ջրամբարի վրա կառուցված ՀԷԿ-ն աշխատում է գերծանրաբեռնված գրաֆիկով, որի արդյունքում վերջին մի քանի ամսվա ընթացքում, ի համեմատ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, ջրամբարից բաց է թողնվել գրեթե երեք անգամ ավելի շատ ջուր, իսկ ջրի մուտքը եղել է շուրջ երկու անգամ ավելի քիչ՝ պայմանավորված ընթացիկ տարվա կլիմայի չորությամբ, ինչի պատճառով մակարդակն իջել է շուրջ 33 մետրով: Մայիսի սկզբի դրությամբ Սարսանգի ջրային պաշարները հասել են կրիտիկական սահմանին՝ մոտ 88 միլիոն մ3 (ընդհանուր ջրատարողության շուրջ 15%-ը), մոտենալով մեռյալ (չօգտագործելի) ծավալին՝ շուրջ 70 միլիոն մ3: Թեեւ վերջին օրերին արձանագրված մեծածավալ տեղումների արդյունքում մի քանի միլիոն մ3-ով վերականգնվել են ջրամբարի պաշարները, սակայն դա խիստ ժամանակավոր բնույթ է կրում, եւ սեղմ ժամկետում, տեղումների նվազմամբ պայմանավորված, ջրի մակարդակը սկսելու է կրկին իջնել:

Եթե կարճ ժամկետում չվերականգնվի Հայաստան-Արցախ միակ բարձրավոլտ էլեկտրագծով էլեկտրամատակարարումը, Սարսանգի ջրամբարի ջրային պաշարներն արագորեն սպառվելու են՝ հանգեցնելով վերոնշյալ ու այլ հիմնախնդիրների սրման եւ ամբողջական հումանիտար ու բնապահպանական աղետի:

Ջրամբարի ընթացիկ վիճակի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար կարելի է դիտել Արցախի հանրային հեռուստատեսության վերջին ռեպորտաժը: Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն իրականացնում է Սարսանգի ջրամբարի բնապահպանական իրավիճակի մշտադիտարկում, որի շնորհիվ հնարավոր կլինի ավելի համակողմանիորեն գնահատել շարունակվող բնապահպանական աղետի հետեւանքները:

ԱՇԽԱՐՀ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԳՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Հազար խորանարդ մետր բնական գազի բորսայական արժեքը նվազել է 350 դոլարի նշագծից:

2021 թվականի հունիսի 7-ից աճուրդում նման ցածր արժեքներ չեն գրանցվել. վկայում են լոնդոնյան բորսայի տվյալները: Նիդեռլանդական TTF հանգույցում հունիսյան ֆյուչերսների արժեքը նվազել է մինչեւ հազար խորանարդ մետրի դիմաց 348,3 դոլար կամ ՄՎտժ-ի դիմաց 31,1 եվրո:

Նման դինամիկայի հիմնական պատճառներից են դարձել եվրոպական ստորգետնյա գազի պահեստարանների համեմատաբար բարձր լցվածությունը, բարենպաստ եղանակային պայմանները եւ հեղուկացված բնական գազի մեծ ներմուծումը տարածաշրջանի երկրներ: Վերոնշյալ գործոնների արդյունքում եվրոպական պետություններին հաջողվել է լրացնել տեղական ստորգետնյա գազի պահեստարանների իրենց ընդհանուր տարողությունից 64 տոկոսով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 5 ՃՏՊ. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ԱՌԱՋԱՏԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆ

«Կոնվերս բանկ»-ը հայտարարում է Yerevan Tech Forum 2023-ին մասնակցության մասին որպես առանցքային 5G գործընկեր՝ վերահաստատելով թվային փոխակերպումների առաջատար դառնալու հավակնությունը:

Yerevan Tech Forum-ին «Կոնվերս բանկ»-ը մասնակցելու է ներկայացուցչական կազմով՝ ներառյալ բանկի թվային փոխակերպման եւ նորարարությունների կոմիտեի նախագահ Ահարոն Լեւոնյանը եւ ոլորտի առաջատար այլ մասնագետներ: Բացի այդ, համաժողովի ողջ ընթացքում տեղում գործելու է բանկի բիզնես տաղավարը:

Մասնակցության այս ձեւաչափի շնորհիվ՝ հյուրերն ու մասնակիցները հնարավորություն են ունենալու ծանոթանալ բանկի պրոդուկտներին եւ ծառայություններին, խորհրդատվություն ստանալ բանկի կողմից առաջարկվող թվային լուծումներին, ինչպես նաեւ հաղորդակցվել բանկի մասնագետների հետ: «Կոնվերս բանկ»-ի թիմը պատրաստակամ է համաժողովի մասնակիցների ու հյուրերի հետ կիսվել իր փորձառությամբ եւ փորձագիտական տեսակետով, այդ թվում՝ Open mobile banking-ի զարգացման եւ թվային հնարավորությունների զարգացման շուրջ:

Բանկի թվային փոխակերպման կարեւորագույն եւ ներկայում ակտիվորեն զարգացող ուղղություններից է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար թվային պրոդուկտների ներդրումը: Մասնավորապես, բանկը ներկայացրել է Converse Business հավելվածը, որը տնտեսվարողներին հնարավորություն է տալիս ֆինանսները կառավարել եւ բանկային գործառնություններ կատարել հարմարավետ միջավայրում: Բացի այդ, մեծ պահանջարկ են վայելում նորարարական CPay եւ CPos պրոդուկտները, որոնց ներդրմամբ սպասարկման եւ առեւտրի ոլորտի սուբյեկտները ստացել են անկանխիկ վճարումների ընդունման պարզ ու հարմարավետ գործիքներ:

Yerevan Tech Forum 2023 համաժողովում 5G գործընկերոջ կարգավիճակը «Կոնվերս բանկ»-ում որակում են գոհացուցիչ ու միաժամանակ պարտավորեցնող. սրանով բանկը հայտարարում է թվայնացման ռազմավարության շրջանակում ներդրումների եւ այնպիսի նոր պրոդուկտների մշակման մտադրության մասին, որոնք կբավարարեն հաճախորդների պահանջները եւ հուսալի նախադրյալներ կստեղծեն թվային տնտեսության մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու համար:

Նշվել է նաեւ, որ «Կոնվերս բանկ»-ի ամենապահանջված պրոդուկտը Converse Mobile հավելվածն է, որից օգտվում է 100 հազարից ավելի օգտատեր:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՅՑ՝ ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն աշխատանքային այց է կատարել Կոտայքի մարզի մի շարք կրթական ու մշակութային հաստատություններ:

Նախարարին ուղեկցել են Ազգային Ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, Կոտայքի մարզպետի տեղակալ Վասակ Վարդանյանը եւ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Կարեն Հունանյանը:

ԿԳՄՍ նախարարի առաջին կանգառը Եղվարդ քաղաքի «AV» թատրոն-ստուդիան էր, որը հիմնադրվել է 2022 թ. հոկտեմբերին: Ժաննա Անդրեասյանը նախ շրջել է թատրոնի փոքրիկ տարածքում, ծանոթացել փորձասենյակի եւ դահլիճի պայմաններին, ապա դիտել «Ամանդա» նորարարական պլաստիկ ներկայացումը, որը շուրջ կես տարի գործող թատրոն-ստուդիայի բեմադրած երկրորդ ներկայացումն էր:

Թատրոն-ստուդիայի հիմնադիրներ Անի Վարդանյանի եւ Վիգեն Թադեւոսյանի խոսքերով՝ Եղվարդում թատրոն-ստուդիա ստեղծելու գաղափարի հիմքում ընկած էր համայնքում մշակութային կյանքն առավել աշխուժացնելը, ինչպես նաեւ պարարվեստի եւ թատրոնի հետ անմիջական կապ ունեցող տեղի երիտասարդներին բեմում հանդես գալու հնարավորություն ընձեռելը: Նրանք տեղեկացրել են, որ առաջիկայում նախատեսում են բեմադրել «Փոքրիկ իշխանը» ներկայացումը:

Հաջորդիվ Ժաննա Անդրեասյանն այցելել է Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոց, որտեղ ծանոթացել է դպրոցի հիմնակառուցման աշխատանքներին: Դպրոցը կառուցվում է ՀՀ կառավարության եւ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեյսմիկ անվտանգության բարելավման» ծրագրի շրջանակում. դպրոցի կառուցումը նախատեսվում է ավարտին հասցնել 2024 թվականին: Շինարարական ընկերության պատասխանատուն ներկայացրել է իրականացվող աշխատանքները՝ վստահեցնելով, որ դրանք ընթանում են նախատեսված ժամանակացույցին համապատասխան, սահմանված նորմերի պահպանմամբ:

Դպրոցի տնօրեն Արթուր Տաշչյանը փաստել է, որ կառուցվում է ժամանակակից ենթակառուցվածքներով, ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, լաբորատորիաներով, մեծ մարզադահլիճով ուսումնական հաստատություն, որը կունենա բարեկարգված, խնամված ու կանաչապատ տարածք եւ կապահովի որակյալ կրթության համար բարենպաստ կրթական միջավայր:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարն այցելել է նաեւ Կաթնաղբյուր բնակավայր, որտեղ ընթանում են հիմնական դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Այստեղ կառուցվում է մոդուլային նոր դպրոց, որի հիմնական աշխատանքներն արդեն ավարտական փուլում են: Ժաննա Անդրեասյանը շրջել է դպրոցի տարածքում, ծանոթացել դասասենյակների, ապաստարանի, գրադարանի, ճաշարանի, սանհանգույցի, հանդիսության սրահի պայմաններին: Դպրոցը, ըստ շինարարի, շահագործման կհանձնվի մինչեւ տարեվերջ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերի մասնագիտական խորհրդի հերթական նիստը:

ՀՀ ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ նիստը վարել է խորհրդի նախագահ, երաժշտագետ Հռիփսիմե Պիկիչյանը: Հանդիպմանը քննարկվել են ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանության արժեքների ցանկում գրանցման ներկայացված առաջարկները:

Առանձին-առանձին անդրադառնալով ներկայացված առաջարկներին՝ խորհրդի անդամները հանդես են եկել դիտողություններով եւ մասնագիտական առաջարկություններով: Քննարկվել են համայնքների, պետական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացրած մշակութային արժեքների առանձնահատկությունները, դրանց առկայության եւ պահպանման ապահովման վերաբերյալ հարցեր: Ընդգծվել է արժեքի տարածման եւ կիրառման աշխարհագրությունն ու բնութագիրը հստակեցնելու պահանջը: Խորհուրդը կարեւորել է նեղ մասնագիտական մոտեցում պահանջող հայտերի լրամշակումը համապատասխան կառույցների միջոցով կատարելու անհրաժեշտությունը: Արժեքները հանրահռչակելու վերաբերյալ խորհրդի անդամներն առաջարկել են դիտարկել հանրապետության տարածքում անցկացվող փառատոներին դրանք ներառելու եւ ըստ այդմ ներկայացնելու հնարավորությունները:

Ամփոփելով նիստը՝ խորհուրդը որոշել է ներկայացված առաջարկների մի մասը, մասնագիտական դիտարկումների համաձայն, ուղարկել լրամշակման եւ դիտարկել համայնքներից, խմբերից, անհատներից, ինչպես նաեւ մշակութային, կրթական եւ հասարակական կազմակերպություններից նոր առաջարկների ստացման հնարավորությունը:

Ն.Հ.

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ

ԿՈՄԻՏԱՍԸ ՄՈՒՂԱՄ ՉԻ ՄԱՔՐԵԼ

Կոմիտասը եվրոդական լսարանին հարմարվելու նպատակ երբեւէ չի ունեցել, այլ եվրոդական լսարաններին անմնացորդ սիրել է տվել բուն հայկական երաժշտությունը. այս մասին հայտարարություն է տարածել Կոմիտասի թանգարան-ինստիտուտը:



«Սիրելի՛ բարեկամներ,

Հաշվի առնելով վերջին օրերին Կոմիտաս Վարդապետի գործունեության ու ժառանգության վերաբերյալ հնչեցված ոչ մասնագիտական եւ իրականության հետ աղերս չունեցող մտքերի հանրային լայն արձագանքը՝ Կոմիտասի թանգարան - ինստիտուտը վերստին ցանկանում է անդրադառնալ Վարդապետի գործունեությանն ու ժառանգությանն առնչվող՝ վերջին շրջանում անհարկի քննարկման առարկա դարձած որոշակի դրվագներին:

Կոմիտասը հայ ժողովրդի ինքնութենական համակարգի ամենաառանցքային կերպարներից մեկն է:

Նա նաեւ արեւելյան երաժշտության գիտակ էր, սակայն մուղամի հետ առնչություններ չի ունեցել, «չի մաքրել», «չի ջնջել»: Կոմիտասը եվրոպական լսարանին հարմարվելու նպատակ երբեւէ չի ունեցել, այլ եվրոպական լսարաններին անմնացորդ սիրել է տվել բուն հայկական երաժշտությունը: Ավելին՝ քառորդ նոտաները եվրոպացիներին անհասանելի չեն եղել, որպեսզի այդ ճանապարհով նրանց որեւէ տեսակի երաժշտություն հրամցվեր:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտն այս առիթով նախաձեռնում է հայ երաժշտությանն ու Կոմիտասին նվիրված դասախոսությունների, հանրամատչելի զրույցների, կլոր սեղան քննարկումների շարք: Այդ շարքի առաջին հանդիպումը կկայանա մայիսի 20-ին՝ Թանգարանային գիշերը՝ ժ. 16:00-ին: Հյուրընկալելու ենք արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Մարիաննա Տիգրանյանին, որը կզրուցի հայ ծիսական երաժշտության, երաժշտաբանաստեղծական արվեստի մասին»:

«ՄՈՒՂԱՄԸ ՄԵՐՆ Է ԵՂԵԼ»

ՎՐԴՈՎՄՈՒՆՔԻ ԱԼԻՔԸ ՉԻ ՄԱՐՈՒՄ

Երեւանում արդեն մի քանի օր է՝ չի մարում վրդովմունքի ալիքը, որը բարձրացել էր ռեփեր Սուղեր Սամոյի այն հայտարարության պատճառով, թե «մուղամ» երաժշտական ժանրը հայկական է եւ ոչ մի կապ չունի մեր հարեւան պետությունների մշակույթի հետ: «Մուղամը մերն է եղել: Կոմիտասը եկել եւ մաքրել է դա, քանի որ, երբ մատուցել է այդ երաժշտությունը Եվրոպային, նրանք չեն հասկացել այդ նոտաները, իսկ ինքը հայ երգը տարածելու համար եկել ու ջնջել է այդ նոտաները: Ես գիտեմ այդ պատմությունը, եւ պարզապես տարածելու համար նա ջնջել է նման նոտաները, բայց ռաբիսը միշտ մերն է եղել»,- ասել է նա:

ArmLur.am-ը վերհիշել է, որ տարիներ առաջ՝ 2011 թվականին, երգահան Վահրամ Պետրոսյանը նույնպես նմանատիպ հայտարարությամբ էր հանդես եկել՝ ասելով՝ իրեն հոգեհարազատ է ադրբեջանական երաժշտությունը, եւ արժանացել հանրության սուր քննադատությանը: Նկատենք, որ հայկական շոու բիզնեսի ներկայացուցիչները հաճախ են բախվում այս խնդրին, քանի որ դաշտում ունենք ոչ քիչ երգիչ-երգչուհիներ, որոնք իրենց երգերում օգտագործում են մուղամային էլեմենտներ՝ այդպիսով ստվեր գցելով հայկական մաքրամաքուր երաժշտության վրա:

ԼՈՒՐԵՐ

ՖԻՖԱ-Ի 2026Թ. ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻՖԱ-ն, ներկայացրել է 2026 թվականի աշխարհի առաջնության տարբերանշանը:

Մունդիալ-2026 թվականի տարբերանշանն իր մեջ ներառում է աշխարհի առաջնության գավաթը եւ տարեթիվը՝ 2026, որը շրջապատված է տարբեր գույներով: Առաջիկայում հանրությանը կներկայացվեն նաեւ աշխարհի առաջնությունը հյուրընկալել պատրաստվող 16 քաղաքների տարբերանշանները:

2026 թվականի աշխարհի առաջնությունը կկայանա ԱՄՆ-ում եւ Մեքսիկայում: Այս առաջնությանը կմասնակցեն 48 երկիր:

Ֆուտբոլի աշխարհի առաջնության գործող չեմպիոնն Արգենտինան է:

ՎԱՃԱՌՎԵԼ Է ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Ավելի քան 1000 տարվա վաղեմություն ունեցող Աստվածաշունչը Նյու Յորքում 38,1 մլն դոլարով վաճառվել է Sotheby's աճուրդում: Հրատարակությունը դարձել է աճուրդում երբեւէ վաճառված ամենաթանկ ձեռագիրը:

«Այսօր պատմական առանձին աճուրդում վաճառվել է ամենահին եւ ամբողջական եբրայերեն Աստվածաշունչը 38,1 միլիոն դոլարով»,-ասվում է հաղորդագրության մեջ: Ինչպես հայտնում են ՁԼՄ-ները, գիրքը մոտ 1100 տարեկան է:

Աստվածաշունչը գնել է ամերիկացի նախկին դիվանագետ Ալֆրեդ Մոզեսը ամերիկյան ոչ առեւտրային կազմակերպության անունից, որն այն կփոխանցի Թել Ավիվում տեղակայված ANU թանգարանին. նշում է Sotheby's-ը:

● *Մայիս 19-ին «Յանս» մյուզիք հոլում տեղի կունենա Ladaniva & Yans համերգը: Տոմսերի արժեքը՝20000-30000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երեւանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ապրանքներ ներմուծելիս մաքսային ձեւակերպումները կարող է արդյոք իրականացնել Սիսիանում:

Կարո Հարությունյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեւակերպումների իրականացման վայր է համարվում Արարարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ՝ մինչեւ երկու տարին չգերազանցող ժամկետով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող են ավանդատուները տեղեկանալ ավանդների հատուցման դեպքի մասին:

Էմմա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին՝ նշելով երաշխավորված ավանդը ստանալու կարգը՝ ներառյալ ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջի ներկայացման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, եղանակները, ժամկետները:

Հատուցման դեպքին հաջորդող 20-րդ աշխատանքային օրվանից առնվազն մեկ օր առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հրապարակում է լրացուցիչ հայտարարություն, որտեղ նշվում են՝

ա) երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի եւ դրա մասնաճյուղերի անվանումները եւ հասցեները,

բ) ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի եւ հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջեւ տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝ երաշխավորված ավանդի հատուցումը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երաշխավորված ավանդի հատուցումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ՝ ավանդատուի նշված հաշվին փոխանցման միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ Այսեր Իսայանը՝ «Հանուն ժողովրդի բարեկեցության» ՀԿ նախագահը, ի պաշտպանություն 120 հազար շրջափակված արցախցիների՝ անժամկետ ակցիա է իրականացնում «Նեմեսիս» արձանի մոտ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +13 + 19
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +12 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +16 + 19
Գեղարքունիք	0 + 5 +16 + 19
Լոռի	+ 3 + 9 +18 + 22
Տավուշ	- 2 + 1 +14 + 18
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +16+ 20
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 9 + 21 + 23

Արարատ	+6 + 8 +21 + 23
Արմավիր	+6 + 8 +21 +23
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 +14 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 8 +21 + 23
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 4 +13 + 16
Արցախ	+ 7 + 11 +16 + 20
Երեւան	+ 6 + 8 +20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*